

իրենք իշխանագուն եւ նախարարական մարդիկ, այսպիսի
նախատանաց մատն եալ:

Իսկ Յովնան՝ «Այո,— կ'ըսէր,— երբ արաքին կրօնական եւ
քաղաքական բռնութիւնն իմ ազգիս վրայ կը ծանրանան,
մարդկային եւ աստուածային օրէնք այսպիսի մատնիչներու ձեռք
խաղալիք կը դառնան, տիրասիրութեան տեղ տիրանենգութիւն մեր
հոգեւոր գլուխներէն նաեւ աւելի կը վերադասի, քրիստոսատեաց,
արիւնարբու եւ ուխտադրուժ մահմեդականին ու օտարին լուծը
Քրիստոսի եւ ազգային պարտաւորութեանց լուծէն աւելի ընտրելի
կը քարոզուի այսպիսի ժամանակ, ուր հայոց հոգեւոր տէրն ու
կաթողիկոսն անգամ սասնցուոց քաջագործութիւնք՝ Իսուֆ
ոստիկանին, որ զբազարատայ դաւեց հոգուով եւ մարմնով, որ Մուշ
եւ բոլոր Տարօն ի հուր եւ ի սուր մատնեց, որ Ս. Կարապետ նոյն
վիճակին պիտի բերէր, Իսուֆին արժանաւոր մահը եւ պատիժը
յիմարութիւն կը վճռէր, այսպիսի ժամանակ դաւաճաններու դէմ՝
դաւաճանութիւն, նենգաւորներու դէմ՝ նենգութիւն ամէն հայու
իրաւունքն էր եւ ես, այո՛, ամէն ջանք ի գործ գրի զիրենք ձեռք
բերելու համար: Կրնայի զիրենք կախել առաջին փայտէն՝ ես որ
համոզուած էի իրենց եղեռանց ստուգութեան վրայ, բայց չուզեցի,
վասնզի կը փափագիմ, որ իմ ազգս մարդկային կեանքը խաղալիք չի
համարի որովհետեւ գրուած է. Մի՛ սպանանէր, այլ դատե եւ
դատապարտե: Այս իշխանները կուրանան թէ գրած չեն Բուդայի,
բայց ի՛նչ պիտի ընեն եթէ ցցնեմ իրենց եւ այս ժողովքին նոյն
մատնութեան նամակը իրենց կնիքներով՝ որով մատնեցին Աշոտ եւ
Գուրգէն եւ Վասպուրական արեամբ ողողեցին: Ահա՛ նամակը»:

Եւ այս ըսելով տարաւ թուղթ մը տուաւ ծեր դատաւորին ձեռքը, որ
սկսաւ բարձր եւ դողդոջուն ձայնով կարդալ նամակը, որուն օրինակը
այսպէս էր.

«Յայոց աշխարհիս վերակացութիւնը Զեզ յանձնուած լինելով
ինքնակալ թագաւորէն, ամէնքը իշխանք եւ տեարք, կողմակալք եւ
կուսակալք, քաղաքապետք եւ մարզապետք բոլոր Յայաստան երկրիս